ԱՆՁՆԱՅԻՆ-ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Անձնային-անհատական գործոնների համակարգը, որ իր մեջ ներառնում է անձի խառնվածքի տիպը, հուզականության աստիճանը, մտավոր զարգացման մակարդակը և այլն, անձի սոցիալական դիրքորոշումների ձևավորման հիմնորոշ հատույթներից է։ Անձի սոցիալական դիրքորոշումների ձևավորման ու գործառման վրա ներազդում են նաև սոցիալ-հոգեբանական գործոնները՝ սոցիալական դերերը, սոցիոգեն պահանջմունքները, արժեքային կողմնորոշումները։ Նշենք, որ որոշակի մեթոդաբանական դժվարություններ են ծագում անձի հոգեբանական կառուցվածքի անձնային-անհատական (խառնվածք, բընավորություն, նյարդայնության տիպ) և որևէ երևույթի, իրողության սուբյեկտիվ գնահատականների (անձնային իմաստների) միջև եղած փոխկապակցությունը բացահայտելիս։ Տվյալ դեպքում գործ ունենք անձի գործառման անհատական և սոցիալ-հոգեբանական օրինաչափությունների պարզաբանման հետ։ Դիցուք, անհատի մոտ իր անմիջական ղեկավարի նկատմամբ ձևավորվել է սրա՝ որպես բռի ու կոպիտ մարդու, սոցիալ-հոգեբանական դիրքորոշում, որը կարող է պատճառաբանվել զանազան գործոններով։ Այն կարող է անձի անցյալում արժանապատվությանը հասցրած վիրավորանքի կամ խմբի անդամների կողմից գործադրված ճնշման արդյունքը լինել։ Այդ դիրքորոշումը կարող է նաև այն բանի հետևանքը լինել, որ տվյալ անձը իր բնավորության բացասական գծերը՝ ինքնաքննադատության պակասը, կամայականությունն ու ինքնիշխանությունը անհիմն կերպով տարածել է իր ղեկավարի վրա (պրոյեկցիայի պաշտպանական մեխանիզմ)։ Բացի այդ, սոցիալական դիրքորոշումը իր մեջ կարող է խտացնել անձի բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են՝ վեհերոտությունը, սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը և այլն։ Ընդ որում վերոհիշյալ գործոնները կարող են նաև միահյուսված հանդես գալ ու ներազդել անձի սոցիալական դիրքորոշումների վրա։

Անձի սոցիալական դիրքորոշումները ձևավորող գործոնների մեջ մեծ են մարդու նյարդային համակարգի, խառնվածքի առանձին որակական հատկանիշների դերն ու նշանակությունը։ Դրանք, հասարակության կողմից առաջադրվող պահանջների (նորմերի, սոցիալական դիրքորոշումների) հետ միասնության մեջ վերցված, հնարավորություն են ընձեռում միջանհատական փոխհարաբերությունների համակարգային վերլուծության համար։ Ն. Օբոզովի հետազոտությունները վկայում են, որ զույգերը, որոնք իրար հետ կայուն կերպով փոխգործում են խմբային կյանքում, ավելի հաճախ ունենում են «թույլ-ուժեղ» և հազվադեպ՝ «ուժեղ-ուժեղ» նյարդային համակարգի տիպերի զուգորդումներ։ Իրար փոխբացառող անձնավորություններն ունենում են «ուժեղ-ուժեղ» և ավելի հազվադեպ՝ «թույլ-թույլ» տիպերի զուգորդումներ[1]։ Պարզվել է, որ մելանխոլիկ (մելամաղձոտ) խառնվածքի անձը իր նմանների հետ ունեցած միջանհատական հաղորդակցության ընթացքում անհամեմատ ավելի կայուն է, քան ֆլեգմատիկ (սառնարյուն) և սանգվինիկ (տաքարյուն) խառնվածքի տեր մարդկանց հետ։ Հետաքրքիր է, որ խոլերիկը խոլերիկի, իսկ սանգվինիկը՝ սանգվինիկի հետ տևականորեն չեն կարող փոխգրավիչ լինել։ Ա. Գուրկոն նշում է, որ խոլերիկները, իրենց ներհատուկ դյուրագրգռությամբ

---

[1] Н. Н. Обозов, Межличностные отношения, Л., 1979, с. 49.

ու խոովահուզությամբ, անհաշտ բնավորությամբ, դժվարությամբ են հարմարվում սոցիալական խմբի կենսագործունեության նորմերին ու դիրքորոշումներին[2]։ Խոլերիկ խառնվածք ունեցող անձի սոցիալական դիրքորոշումները, որպես կանոն, անկայուն, անհավասարակշիռ բնույթ ունեն։ Այդ հոգեբանական որակները զգալիորեն նվազեցնում են խոլերիկ մարդու «հասարակական գրավչությունը», խմբի այլ անդամների մոտ նրա նկատմամբ ձևավորելով որոշակի վերաբերմունք։ Դժվար չէ տեսնել, որ խառնվածքների միջև առկա անհատական տարբերություններն անմիջականորեն ներազդում են միջանհատական դիրքորոշումների ձևավորման ընթացքի վրա։ Ֆլեգմատիկ անձը սոցիալական միջավայրի, մարդկային փոխհարաբերությունների նկատմամբ ունեցած իր «անտարբեր» վերաբերմունքի շնորհիվ ավելի մեծ պասիվություն է դրսևորում միջանհատական դիրքորոշումների մշակման նկատմամբ, քան սանգվինիկը։

Անձի սոցիալական դիրքորոշումների ձևավորման վրա ներազդում են մարդու հոգեկան այնպիսի հատկություններ, ինչպիսիք են էքստրավերսիան և ինտրովերսիան։ Էքստրավերսիան՝ որպես անձի բնութագիծ, «աչքի է ընկնում նրանով, որ անմիջականորեն ու պատրաստակամությամբ արձագանքում է արտաքին ազդեցություններին, որոնք ավելի մեծ չափով են դետերմինավորում նրա վարքը, քան ներհոգեկան գործոններն ու բովանդակությունները (ներքին դրդապատճառները, հիշողության բովանդակությունը, մտքերը, անձնային գծերը)»[3]։ Խոսքը «դեպի դուրս կողմնորոշված անձնավորության» մասին է։ Էքստրավերտ տիպի անձը այլ մարդկանց հետ հեշտությամբ մտնում է հաղորդակցության ու շփման մեջ։ Ինտրովերսիոն խառնվածք «ունեցող անձի (ինտրովերտի) ապրումները, գործողությունները, ակտիվությունը ընդհանրապես ավելի մեծ չափով պայմանավորված են ու միջնորդավորված իր ներաշխարհի իրադարձություններով ու գործոններով՝ հիշողության ու երևակայության բովանդակություններով, դրդապատճառներով և այլն»[4]։

Կարելի է ենթադրել, որ էքստրավերտ տիպի անձը, իրեն հատուկ իմպուլսիվ, անսպասելի ու չգիտակցված մղումների ազդեցության տակ, ուրիշ մարդկանց նկատմամբ իր դիրքորոշումը ձևավորելիս, հենվում է իր անմիջական ընկալման փորձի վրա և գրեթե դրանով էլ սահմանափակվում է։ Ինտրովերտը, ընկալվող մարդու օբյեկտիվ հոգեբանական որակների մեջ դեռևս խորամուխ չեղած, նրա մասին իր հետագա պատկերացումները գերազանցապես կառուցում է սուբյեկտիվորեն ընկալվող բնութագրերի հիման վրա։ Ե. Շորոխովայի և Մ. Բոբնևայի ուսումնասիրությունները[5] ցույց են տվել, որ ինտրովերտ տիպի անձնավորությունները ուրիշներին տված իրենց գնահատումներում ավելի են հակված համարժեքությանը, քան էքստրավերտները։ Սակայն պատկերը փոխվում է, երբ խոսքը վերաբերում է ինքնարժեքավորմանը՝ իր նկատմամբ ունեցած դիրքորոշմանը. էքստրավերտները ուրիշներին գնահատելիս ավելի զգայուն են ամեն տեսակի անհամապատասխանությունների, դիցուք՝ օբյեկտի իրողության և նրա նկատմամբ սուբյեկտի դիրքորոշման անհամարժեքության, անհամաձայնության նկատմամբ։ Պակաս չափով զգայուն են ինքնագնահատման անճշտության, անհամապատասխանության նկատմամբ։ Դ. Դյոմինան հետաքրքիր օրինաչափություն է բացահայտել[6]. իր նը-

---

2 А. Т. Губко, Параметр общительности-коммуникабельности и тип нервной системы («Общение как предмет теоретических и прикладных исследований», Л., 1973, с. 4).

3 Ա. Ա. Նալչաջյան, Հոգեբանական բառարան, Երևան, 1984, էջ 69։

4 Նույն տեղում, էջ 84։

5 М. И. Бобнева, Е. В. Шорохова, Установки и эталоны межличностного оценивания («Социальная психология личности», М., 1975, с. 203).

6 Д. В. Демина, Некоторые аспекты соотношения самооценки и объективной оценки свойств личности («Социально-психологические проблемы руководства и управления коллективом», М., 1974, с. 137—138).

կտտմամբ դիրքորոշում ձևավորելով, ինտրովերտը հակված է ինքնագնահատականը իջեցնելուն, իսկ էքսարավերտը՝ բարձրացնելուն։ Ամբողջությամբ վերցրած, էքսարավերտին ներհատուկ է վարքի ավելի մեծ ճկունություն ու այաստիկա, քան ինտրովերտին։

Միջանհատական դիրքորոշման ձևավորման ընթացքում օբյեկտի անմիջական ընկալման ու գնահատման գործում էական դեր են խաղում մարդկային բանականության առանձնահատկությունները, անձնավորության մտավոր հասունության մակարդակը։ Այս առումով, սոցիալական դիրքորոշման ձևավորման վրա անմիջականորեն ներազդում են բանականության մի շարք բնութագծեր՝ առաջին. անձի՝ ինֆորմացիան նրա աղբյուրից տարբերելու կարողությունը։ Այլ կերպ ասած, դա անձի՝ օբյեկտիվ ինֆորմացիան ստանալիս այն հաղորդողի անձնային հատկություններից և նրա հետ ունեցած միջանհատական հարաբերությունների բնույթից վերանալու կարողությունն է։ Ինքնին հասկանալի է, որ նման կարողությունը նպաստում է այն բանին, որ մարդը ուրիշների հետ ունեցած իր փոխհարաբերությունները կառուցում է ճշմարիտ ու համարժեք հիմքի վրա, հաղթահարում է միջանհատական հարաբերությունների մեջ առկա նախապաշարումներն ու թյուրիմացությունները։ Երկրորդ. երբ մարդը միևնույն անձի մասին ունի իրարամերժ կարծիքներ, սակայն, հենվելով իր բանականության ուժի վրա, ձգտում է այդ անձի մասին անհակասական պատկեր ստեղծել։ Այդ կարողությունը վկայում է բանականության որակական ճկունության մասին։ Անձի՝ օբյեկտի մասին երկու հակադիր կարծիքները հավասարակշռելու ձգտման գաղափարն ընկած է իմացական անհերդաշնակության (կոգնիտիվ դիսոնանսի) տեսության հիմքում։ Եվ, վերջապես. բանականությունը դիրքորոշումների ձևավորման վրա ներազդում է նրանով, որ պատրաստ է նոր դիրքորոշումներ ընդունելու կամ մերժելու։ Այլ կերպ ասած, անձը ունակ է հաշվեկշռված ու մտածված վերաբերվելու տարբեր, այդ թվում և նոր դիրքորոշումների ընտրությանը։

Հարկ է ընդգծել, որ անձի՝ նոր դիրքորոշումն ընդունելու կամ նրան դիմադրելու պատրաստակամությունը կապված է մարդկային բանականության ավելի ընդհանրական բնութագծի՝ գիտակցության «բաց» կամ «ներբաց» և «ներփակ» տիպերի հետ։ Գիտակցության «ներփակ» տիպը բնութագրվում է մտածելակերպի պահպանողականությամբ ու դոգմատիզմով, պաշտպանական մեխանիզմներին (արտամղում, պրոյեկցիա, ռացիոնալացում՝ և այլն) մշտապես դիմելու սուբյեկտիվ միտվածությամբ, որը հանգեցնում է սոցիալական դիրքորոշումների ձևավորման պրոցեսի զանազան աղավաղումներին։ Այս կարգի անձնավորությունները, որպես կանոն, հակված են սուբյեկտիվիզմի ու վոլյունտարիզմի, կանխակալ՝ կարծիքների, բանականության քննադատական ուժի բացահայտ թերագնահատմանը։ Դրան հակառակ՝ «բաց» կամ «ներբաց» կողմնորոշում ունեցող մարդկանց գիտակցության ուղղվածությունը աչքի է ընկնում հոգեբանական ճկունությամբ, հանդուրժողականությամբ ու ողջամտությամբ։

Միջանհատական հարաբերությունները կարգավորող սոցիալական դիրքորոշումների ձևավորման վրա ազդում են երևակայությունը, դրան ներհատուկ մտապատկերները, մտահղացումներն ու վարկածները։ Ստեղծագործական երևակայության տեր անհատը, հայտնվելով ոչ միօրինակ իրադրություններում, երբ փոխվում են մարդկային հաղորդակցության պայմաններն ու բնույթը, ոչ միայն ճիշտ կողմնորոշվում է, այլև կանխատեսում է միջանհատական հաղորդակցության ապագա ընթացքի հնարավոր տարբերակները։ Բնականաբար, չկան այնպիսի մարդիկ, որոնք կարող լինեն բացարձակ ճշգրտությամբ կանխատեսելու միջանհատական հաղորդակցության ապագա ընթացքը՝ բոլոր մանրամասներով։ Հաղորդակցության ընթացքում մշտապես ի հայտ են գալիս չկանխատեսվող պարագաներ ու փաստեր, որոնց հետևանքով փոխվում է ընկալողի ու արժեքավորողի դիրքորոշումը այս կամ այն կարևոր հարցի վերաբերյալ։

Սոցիալական դիրքորոշումների ձևավորման վրա բանականության ներազդեցության գործում կարևոր են սոցիալ-հոգեբանական ռեֆլեքսիայի դերն ու նշանակությունը։ «Սոցիալ-հոգեբանական ռեֆլեքսիան ուրիշների հետ ունեցած սեփական փոխհարաբերությունները գնահատելու ու ընկալելու սուբյեկտի կարողությունն է»[7]։ Այն հնարավոր է դարձնում միջանհատական փոխհարաբերությունների իմաստավորումը, սեփական մտածելակերպի ու ապրելակերպի կատարելագործումը։

Անշուշտ, բանականության նշված բնութագծերով չի եզրափակվում այն գործոնների համախումբը, որն ազդում է դիրքորոշումների ձևավորման ու գործառման վրա։ Այստեղ փոքր չէ նաև հումորի ընկալման ու կիրառման, զրույցի վարման, խոսելաձևի որոշ առանձնահատկությունների դերը, որոնք կապված են փաստարկման եղանակի ու բնույթի, լեզվահագեցվածության հետ։ Հայտնի է, որ մարդիկ գերադասում են շփվել խմբի այն անդամների հետ, որոնց խոսելաձևը միօրինակ չէ, փաստարկված ու հարուստ է դարձվածքներով։ Մտավոր զարգացման մակարդակը ուղղակի ներազդում է միջանհատական ընտրության պրոբլեմի լուծման վրա։ Մ. Դվորյաշինայի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խմբի անդամները մեկը մյուսին մերձենում են ոչ թե ընդհանուր էրուդիցիայի, գիտելիքների ահռելի պաշարի, այլ բանականության հիմնարար բնութագծերի՝ ճանաչողական ընդունակությունների, մտքի ճկունության, մտածողության կուլտուրայի հիման վրա[8]։

Միաժամանակ պետք է նշել, որ բանականությունը ոչ թե ինֆորմացիայի կամ գիտելիքների վերացական գումար է, այլ սերտորեն կապված է հույզերի ու ապրումների հետ։ «Մտածողությունը,— նշում է Ս. Ռուբինշտեյնը,— որպես իրական հոգեկան պրոցես, բանականի ու հուզականի միասնություն է, իսկ հույզերը՝ հուզականի և բանականի»[9]։ Տարբեր մարդկանց մոտ հուզական կարողությունները տարբեր են՝ կապված բնավորության, դաստիարակության, խառնվածքի, էթնիկական առանձնահատկությունների հետ։ Այս գործոնները ներազդում են այլ մարդկանց նկատմամբ ունեցած հուզական վերաբերմունքի կայունացված եղանակների, տիպերի ձևավորման ու գործառման վրա։ Այդ վերաբերմունքը, որի խտացումն է դիրքորոշումը, կարող է փոխվել օբյեկտի մասին նոր ինֆորմացիայի, վերաիմաստավորման հիման վրա։ Սակայն հայտնի են դեպքեր, երբ իմացական կառուցվածքի բովանդակային փոփոխությունը իր հետ չի բերում դիրքորոշման հուզական տարրի (աֆեկտի՝ որպես կամային գիտակցական վերահսկողության չենթարկվող իմպուլսիվ գործողությունների) փոփոխություն։ Ավելի հաճախ դա վերաբերում է սուբյեկտի համար «նշանակալից» անձնավորություններին։ Այս դեպքում անձը անկարող է կամ չի ցանկանում իր «զգայական պատկերը» (աֆեկտիվ տարրը) համեմատել «ռեֆլեկտիվ դատողության» (իմացական տարրի) հետ։ Ընդամին, դիրքորոշման հուզական կողմը «կարող է փոխակերպվել հուզական սովորության»[10]։

Մյուս կողմից, անձն իր հուզական ոլորտում կարող է աչքի ընկնել անկայունությամբ, իր հույզերի ու ապրումների վաղանցիկությամբ։ Ցանկացած նոր ինֆորմացիա օբյեկտի, նրա կառուցվածքային ու ֆունկցիոնալ փոխակերպումների մասին կարող է հանգեցնել անձի հուզական վերաբերմունքի փոփոխությանը։ Այսպիսի անձի դիրքորոշումները պարզորոշ ու նախանշված բնույթ չունեն, որ զգալի դժվարություններ է ստեղծում միջանհատական հարաբերություններում։ Նկատենք, որ հուզական ոլորտում անհատական տար-

---

[7] К. Е. Данилин, Формирование внутригрупповых установок и рефлексивной структуры группы («Межличностное восприятие в группе», М., 1981, с. 266).

[8] М. Д. Дворяшина, Интеллект и его измерение («Психодиагностические методы в комплексном лонгитюдном исследовании студентов», М., 1976, с. 169).

[9] С. Л. Рубинштейн, Проблемы общей психологии, М., 1973, с. 97—98.

[10] M. Arnold, Emotions and Personality, v. I, New-York, 1960, p. 190.

բերությունները՝ անկայունության կամ կայունության առումով, սերտորեն կապված են հուզական ապրումների, ինքնագիտակցման մակարդակի, այսինքն՝ մտածողության կողմից իրականացվող ինքնավերահսկման ու ինքնատիրապետման ֆունկցիաների հետ։ Դիցուք, որևէ մեկը կարող է առանց մտածելու տրվել իր հույզերին, իսկ մյուսը՝ գիտակցական վերահսկողություն հաստատել դրանց վրա։ Դա ամենևին չի նշանակում, թե անձը անկարող է դառնում հասկանալու ուրիշի հոգեվիճակը, ընդհակառակը. ինքնավերահսկողությունը միջանհատական հաղորդակցությունը դարձնում է ավելի կշռադատված ու իմաստավորված։ Միջանհատական, սոցիալական հաղորդակցությունն անհնար է պատկերացնել առանց հոգևոր-հուզական վիճակները կիսելու, ապրումակցվելու (էմպաթիայի) կարողության։ Հուզականության գործոնը միջանհատական հաղորդակցության մեջ նկարագրվում ու բացատրվում է ապրումակցման՝ հուզական նրբանկատության, հասկացության միջոցով։ Ուրիշի հոգեվիճակը հասկանալու պրոցեսը առավելապես իրականացվում է նույնականության (իդենտիֆիկացիայի)՝ իրեն ուրիշներին նմանեցնելու, սոցիալ-հոգեբանական մեխանիզմի միջոցով։ Պատահական չէ, որ նույնականության հոգեբանական երևույթը միջանհատական դիրքորոշումների ձևավորման մեխանիզմներից է։ Անդրադառնալով դրան՝ Ա. Պետրովսկին նշում է, որ այդ երևույթը հատկապես ցցուն է դրսևորվում խմբային գործունեության մակարդակում։ Այսպես, այն խմբերում (կոլեկտիվներում), որոնք ունեն զարգացման բարձր մակարդակ, առկա է կոլեկտիվիստական իդենտիֆիկացիան, որի դեպքում «խմբի անդամներից մեկի ապրումները մյուսներին տրված են որպես վարքի մոտիվներ, որոնք կազմակերպում են նրանց գործունեությունը, որոնք միաժամանակ ուղղված են խմբային նպատակի իրականացմանը»[11]։

Խմբային իդենտիֆիկացիան սերտորեն կապված է այս կամ այն խմբային բնորոշ արժեքների համակարգի հետ։ Վերջինիս ֆունկցիոնալ դերը բազմազան է. այն ոչ միայն նպաստում է սոցիալական խմբի գործունեության կայունացմանը, այլև հնարավորություն է ընձեռում նրա անդամներին իրենց վարքը գնահատելու ու զուգադրելու, մատնանշում է խմբի առօրյա գործունեության մեջ կայունացված սոցիալական դիրքորոշումները։ Ավելին, որևէ խմբին պատկանելու գիտակցությունը[12], նրանում գործառող սոցիալական դիրքորոշումների «ներքնայնացումը» անձի կյանքին իմաստ ու ամբողջականություն են հաղորդում։ Ուստի, խումբը անձի ձևավորման ու նրա ինքնորոշման հիմնորոշ գործոններից է։ Այս իմաստով խմբի գործունեության մեջ մարմնավորվում են այս կամ այն օբյեկտի ու արժեքի նկատմամբ գոյություն ունեցող ու գործառող սոցիալական դիրքորոշումները։ Խմբի անդամների կողմից սոցիալական այդ դիրքորոշումների «ներքնայնացման». պրոցեսում կարևոր դեր է խաղում լիդերությունը։ «Լիդերությունը,— գրում է Բ. Պարիգինը,— իր բնույթով, ինչպես օբյեկտիվ գործոնների (որոշակի իրադրությունում խմբի շահերի, նպատակների, պահանջմունքների ու խնդիրների), այնպես էլ սուբյեկտիվ գործոնների (անհատի՝ որպես խմբային գործունեության կազմակերպչի ու նախաձեռնողի, անհատական տիպաբանական առանձնահատկությունների) արդյունքն է միաժամանակ»[13]։ Խմբի լիդերի բնութագրերի մեջ հատկապես առանձնանում են մասնագիտական իրավասությունը, խմբային կոնֆլիկտներն ու լարվածությունը վերացնելու կարո-

---

[11] А. В. Петровский, Личность. Деятельность. Коллектив, М., 1982, с. 170.

[12] Գ. Մագրաձեն իր հետազոտությունների ընթացքում պարզել է, որ այս կամ այն հարցի նկատմամբ խմբի անդամների դիրքորոշումը ուղղակի կախվածության մեջ է գտնվում սոցիալական խմբի անդամ լինելու առաջատար պահանջմունքից (տե՛ս Г. А. Маградзе, Аффилятивная тенденция и влияние группы на индивид («Проблемы формирования социоґенных потребностей», Тбилиси, 1974, с. 282)։

[13] Б. Д. Парыгин, Основы социально-психологической теории, М., 1971, с. 303.

ղությունը, կշռադատված վերաբերմունքը խմբի անդամների նկատմամբ և այլն։ Խմբի անդամները շահագրգռված են իրենց մասին լիդերի ունեցած դրական կարծիքով, և, իրենք էլ իրենց հերթին, լիդերի նկատմամբ ձևավորում են դրական դիրքորոշում։ Լիդերի նկատմամբ դրական դիրքորոշումը կարող է կյանքի կոչվել մի շարք պատճառներով. խմբի անդամը կարող է ձգտել նույնանալ լիդերին, նրա դիրքորոշումներին, քանի որ լիդերը աչքի է ընկնում մասնագիտական բարձր իրավասությամբ։ Դեպի լիդերը կարող են մղել նաև կոլեկտիվում ստեղծված կոնֆլիկտային իրադրությունները հաղթահարելու նրա պատրաստակամությունն ու առանձնահատուկ նրբանկատությունը։

Լիդերի նկատմամբ բացասական դիրքորոշումը կարող է բխել նրա այնպիսի անհատական բնութագրերից, ինչպիսիք են՝ պաշտոնական դիրքի շարաշահումը, սուբյեկտիվիզմն ու վոլյունտարիզմը, եսակենտրոնությունն ու ինքնասիրահարվածությունը և այլն։ Լիդերը կարող է ճնշում գործադրել խմբի անդամների վրա, շրջափակել նրանց սոցիալական ինքնարտահայտման ելքերը, արգելակել հասարակական ակտիվության ծավալումն ու զարգացումը։ Այսպիսի դեպքերում խումբը (մասնավորապես, եթե համախմբված է) կարող է փոխել իր դրական դիրքորոշումը լիդերի նկատմամբ, սահմանափակել կամ վերացնել նրա իշխանությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև պատժել, ենթարկել սոցիալական մեկուսացման։

Տեղին է նշել, որ խմբի ներսում միջանհատական հարաբերությունները կարգավորող դիրքորոշումների ձևավորման վրա խորապես ազդում է նաև սոցիալական պահանջմունքների համակարգը։ Առանց սոցիալական պահանջմունքների (հատկապես հաղորդակցման, ինքնահաստատման, ստատուսի ձգտման, հաջողության պահանջմունքների) հնարավոր չէ բացահայտել սոցիալ-հոգեբանական այն մեխանիզմը, որն ընկած է սոցիալական դիրքորոշումների ձևավորման ու գործառման հիմքում։ Անհատի պահանջմունքների փոխակերպման ու զարգացման միտումների ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս «ներխուժելու» անձի ներաշխարհը։ Սոցիալական դիրքորոշումների ուսումնասիրության բնագավառում այսօր խիստ հրատապ է այդպիսի սուբյեկտային մոտեցումը։ Այս ամենից բացի, պիտի ասել, որ անձնային-անհատական բնութագրերը միջանհատական դիրքորոշումների ձևավորման վրա ներազդում են՝ սերտորեն կապված սոցիալական, տնտեսական, մշակութային, ազգային և այլ գործոնների հետ։

Ամփոփենք. 1. անհրաժեշտ է պարզորոշ մեկը մյուսից սահմանազատել անձնային գործոնների կենսաբանական, հոգեբանական և սոցիալական ասպեկտները, որոնք իրար հետ սերտորեն կապված ու փոխազդեցության մեջ են։ Մարդու վարքը, նրա կենսառոճը լիովին չեն հանգում ոչ «զուտ կենսաբանականին», ոչ «զուտ սոցիալականին», ոչ էլ «զուտ հոգեբանականին»։ Դրանք նշված գործոնների համակարգային միասնությունն են, որի կառուցվածքային ամեն մի տարր ամուր կապված է մյուսների հետ։ Այսպես. այն ֆրմբում, որի միջանհատական հարաբերություններում առկա են անհամերաշխության, բարոյահոգեբոր տարանջատվածության զգացումները, որպես կանոն, զգալիորեն արգելակվում է կոլեկտիվիստական դիրքորոշումների ձևավորման ընթացքը։ 2. Դիրքորոշումների ձևավորման պրոցեսը պայմանավորող գործոններից են նաև անձի անցյալի կենսափորձը, խմբում նրա ստատուսը, բարոյահոգեբոր զարգացման մակարդակը, ամբարված գիտելիքների գործածվող պաշարը, ապագայի մասին ունեցած ակնկալումներն ու պլանները։ Ընդորում, սոցիալական հոգեբանության մեջ համակարգային մոտեցման նախադրյալներից է ներկայի ու ապագայի փոխկապակցված, միահյուսված տեսնելու հայեցակետը։ 3. Պետք է ըստ ամենայնի հաշվի առնել անձնային գործոնների փոփոխուն, փոխակերպվող ու զարգացող բնույթը։ Դա հնարավորություն է ընձեռում մարդու վարքի մեջ հաղթահարելու կենսաբանական նա-

խորոշվածության, ճակատագրապաշտական, իսկ մյուս կողմից՝ սոցիալական գործոնների բացարձակացման տարրը սոցիալական իմացության մեջ։ Անձը, որպես ընկալման օբյեկտ ու սուբյեկտ, մշտապես ենթակա է փոփոխությունների։ Սոցիալականացման պրոցեսում տեղի է ունենում անձնային բնութագծերի ողջ համակարգի վերափոխում ու վերակառուցում, ձեռք են բերվում անձնային նոր որակներ, մարում կամ կորչում են հները։ Այս բոլորը վճռականորեն ներազդում է դիրքորոշումների ձևավորման ու գործառման վրա, պայմանավորում դրանց կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները։ Վերջապես, մեթոդաբանական առումով, հարկ է նկատել և այն, որ վերը նշված անձնային գործոնների ու դիրքորոշումների ձևավորման միջև եղած կապը կրում է ակտիվ փոխազդեցության բնույթ։

Այսպիսով, սոցիալական դիրքորոշումների ձևավորման ընթացքը ներկայանում է որպես մի բարդ ու ամբողջական գոյացություն։ Այդ պրոցեսի մեջ իբրև անձի սոցիալական վարքի կարևոր նախադրյալ հանդես են գալիս անձնային-անհատական գործոնները, որոնք մեծ ազդեցություն են գործում մարդկանց սոցիալական դիրքորոշումների ձևավորման ու գործառման վրա։

РОЛЬ ИНДИВИДУАЛЬНО-ЛИЧНОСТНЫХ ДЕТЕРМИНАНТ В ПРОЦЕССЕ ФОРМИРОВАНИЯ СОЦИАЛЬНЫХ УСТАНОВОК

ГАЯНЕ ШАВЕРДЯН

Резюме

К факторам, детерминирующим процессы формирования социальных установок, относятся психологические (темперамент, экстраверсированность-интроверсированность, уровень интеллектуального развития, степень эмоциональности и др.), социально-психологические (характер выполнения социальных ролей, социальная сила-слабость, специфика социогенных потребностей, авторитаризм и др.), характеристики личности. Обобщенная теория по проблеме формирования социальных установок должна быть построена с учетом всех индивидуально-личностных факторов, детерминирующих процесс. Отношения «формирование социальных установок—индивидуальные характеристики личности—поведение личности в группе» имеют характер взаимовлияния.